ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Սենիկ Փանոսյան Արմենի Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/122 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
2	Hojjat Safar Khanlou Tradig CO	Hojjat Safar Khanlou Tradig CO	Hojjat Safar Khanlou Tradig CO	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար պետք է տրամադրվեն փողոցներում տեղադրելու համար 118 /մեկ հարյուր տասնութ/ հատ փոքր աղբաման: Աղբամանները պետք է լինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի, ստորև ներկայացվում է լուսանկարը: Աղբամանների գույները, և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Աղբամանը պետք է լինի հորիզոնական

				առանցք շուրջ պտտվող և պատրաստված լինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբարկղի գետնին ամրացվող հատվածը 30x20x400 մմ չափսերի մետաղական քառանկյուն խողովակից 2մմ պատի հաստությամբ: Ամեն ոտքին պետք է եռակցված լինի անցքերով թիթեղյա ժապավեններ գետնին կայուն ամրացնելու համար 4 տեղով: Աղբարկղի չափսերը՝ բարձրությունը հատակից 980 մմ, դիմացից 500 մմ, աջ և ձախ կողմերից 400 մմ: Աղբարկղի դույլի չափսերը պետք է լինեն 400x220x500մմ չափսերի: Դույլի երկու կողմերից պետք է ամրացված լինեն փայտ պլաստիկ համադրության (կոմպոզիտ) տախտակներ: Յուրաքանչյուր կողմից 5 հատ 70 x 25 մմ չափսերի D2 Պրոֆիլի (ընդհամենը 10 հատ): Փայտ պլաստիկ համադրության (կոմպոզիտ) տախտակների գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Դույլի դիմացի հատվածում պետք է նախատեսված լինի մոխրամանի առանձնացված հատված 1.5 մմ մետաղյա թիթեղից: Առաջ եկած հատվածը 40 մմ, բարձրությունը 30 մմ ամբողջ դույլի լայնքով, իսկ աջ և ձախ մասերից պետք է լինի փակ՝ մետաղյա թիթեղով: Դույլի ստորին հատվածում լինեն անցքեր Φ 10մմ՝ ջրահեռացման համար նախատեսված: Դույլի թիթեղի հաստությունը 1.5 մմ: Դույլի կողային սյուները պետք է լինեն 20x120մմ / 2մմ պատի հաստությամբ քառանկյուն մետաղական խողովակներից: Աղբամանի վերնամասը պետք է պատրաստված լինի 1,5 մմ մետաղյա թիթեղից 400x500 մմ չափսերի: Նյութերը պետք է լինեն չօգտագործված, որոնք անհրաժեշտ է մաքրել յուղից և շուշաթղթել:

				Մետաղական բոլեր հատվածները պետք է լինեն փոշեներկված սև գույնի: Աղբամանը պետք է լինի չօգտագործված: Կից ներկայացվում է նկարը: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Сеник Паносян Армен ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/122 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	марка	технические характеристики
2				